ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
(ԱՀ կառավարության 2020 թվականի մայիսի 18-ի N 372-Ա և 2020 թվականի հուլիսի 9-ի N 187-Ա որոշումներ)

Հարգելի՛ հարկ վճարողներ, ԱՀ կառավարության 2020 թվականի մայիսի 18-ի 372-Ա որոշման մեջ կատարված փոփոխությունների համաձայն, ընդլայնվել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումներով սահմանված աջակցության ենթակա ոլորտների (գործունեության տեսակների) ցանկը: Մասնավորապես, աջակցության ենթակա ոլորտներ են համարվում նաև՝

1) կահույքի արտադրությունը.
2) լուսանկարչության բնագավառում գործունեությունը.
3) ավտոմեքենաների և այլ առարկաների վարձույթը.
4) բնակչության պատվերով կատարվող՝
ա. հագուստի արտադրությունը և նորոգումը.
բ. գլխարկների արտադրություն և նորոգումը.
գ. համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային իրերի նորոգումը.
դ. ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգումը.
ե. կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրությունը, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրությունը, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգումը:

ԱՀ կառավարության 2020 թվականի մայիսի 18-ի 372-Ա որոշմամբ սահմանված՝ աջակցության ենթակա ոլորտներում գործունեություն իրականացնող, սակայն մինչև հուլիսի 15-ը դիմում չներկայացրած տնտեսավարող սուբյեկտները նույնպես կարող են մինչև օգոստոսի 1-ը դիմել պետական եկամուտների կոմիտե աջակցություն ստանալու համար:

1. Միանվագ դրամաշնորհի տրամադրման միջոցառում

▪ **թիրախը**՝ արդյունավետ աշխատատեղերի պահպանման աջակցություն.

▪ ***շահառու***՝ 1-ից 25 (ներառյալ) աշխատակից ունեցող տնտեսավարող.

▪ **օժանդակության ձևը**՝ միանվագ դրամաշնորհ, յուրաքանչյուր 5-րդ աշխատողի աշխատավարձի չափով.

▪ **հիմնական պայմաններ՝**

✓ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում անընդհատ ունեցել են 1-ից մինչև 25 (ներառյալ) վարձու աշխատող.

✓ մարտ ամսվա վարձու աշխատողների թիվը և վերջիններիս գծով հաշվարկված աշխատավարձի ու դրան հավասարեցված եկամուտների մեծությունը կազմում է հունվար և փետրվար ամիսների (ըստ ամիսների) աշխատողների թվի և հաշվարկված աշխատավարձի ու դրան հավասարեցված եկամուտների մեծության առնվազն 80 տոկոսը.

✓ մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են աջակցության ենթակա ոլորտներում, իսկ մնացածը՝ ոչ) գործունեություն ծավալող տնտեսավարողներին աջակցություն տրամադրվում է, եթե աջակցության ենթակա ոլորտներում 2020 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ը գործունեության տեսակարար կշիռը կազմում է տնտեսավարողի ընդհանուր գործունեության առնվազն 40 տոկոսը:

▪ **հարկային մարմին դիմելու վերջնաժամկետը՝** մինչև 2020 թվականի օգոստոսի 1-ը:

▪ ***դրամաշնորհի ստացման եղանակը՝*** փոխանցվում է շահառուի հաշվարկային հաշվին, իսկ առևտրային բանկում շահառուի բանկային հաշվի բացակայության դեպքում՝ շահառուի նշած առևտրային բանկ:

▪ ***ուշադրություն.***

✓ եթե նշվում է բանկային հաշվեհամարը, ապա այն պետք է պատկանի շահառու հանդիսացող հարկ վճարողին.

✓ դիմումներում չպետք է նշվեն արդեն իսկ փակված հաշվեհամարներ.

✓ պարտադիր ստուգել բանկային հաշվի նիշերի համապատասխանությունը: Անձը հաստատող փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը լրացնելիս ևս մեկ անգամ ստուգել դրանց ճշտությունը:

Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջում հրապարակվում են սույն միջոցառման շրջանակներում դրամաշնորհ ստացած տնտեսավարողների տվյալները:

Սույն միջոցառման շահառու չեն կարող համարվել՝

✓ ***պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները, հասարակական միավորումները, ոչ առևտրային կոոպերատիվները.***

✓ ***մեկից ավելի ոլորտներում գործունեություն ծավալող այն հարկ վճարողները, ովքեր մինչև որոշման փոփոխությունը հանդիսացել են միանվագ դրամաշնորհի տրամադրման միջոցառման շահառու և ստացել դրամաշնորհ:***

2. Միանվագ դրամական աջակցության տրամադրման միջոցառում

▪ **թիրախը**՝ փոքր ձեռնարկատիրության գործունեության շարունակականության ապահովում.

▪ **շահառու**՝ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի ապրիլի 1-ն ընկած ամբողջ ժամանակահատվածում վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերը, այդ թվում՝ արտոնագրային վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք:

▪ **օժանդակության ձևը**՝

1) անհատ ձեռնարկատիրոջ (բացառությամբ արտոնագրային վճար վճարող հանդիսացող) դեպքում՝ 2019 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների իրացման շրջանառության 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով և ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի կրկնապատիկը.

2) արտոնագրային վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձի դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով:

3) միանվագ դրամական աջակցության տրամադրման միջոցառման շահառու հանդիսացած և աջակցություն ստացած մեկից ավելի ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսավարողներին տրամադրման ենթակա աջակցության գումարի հաշվարկը կատարվում է՝ նվազեցնելով մինչև որոշման փոփոխությունը ստացած աջակցության գումարը:

▪ **հիմնական պայմաններ**՝

✓ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի ապրիլի 1-ն ընկած ամբողջ ժամանակահատվածում անհատ ձեռնարկատերը չի ունեցել վարձու աշխատող.

✓ մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են աջակցության ենթակա ոլորտներում, իսկ մնացածը՝ ոչ) գործունեություն ծավալող անհատ ձեռնարկատերերին աջակցություն տրամադրվում է, եթե 2019 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների իրացման շրջանառության մեջ աջակցության

ենթակա ոլորտներում գործունեության (իրացման շրջանառության) տեսակարար կշիռը կազմում է առնվազն 40 տոկոսը:

✓ անհատ ձեռնարկատերը (բացառությամբ արտոնագրային վճար վճարող) 2019 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ունեցել է իրացման շրջանառություն և 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ գործունեությունը դադարեցված չէ.

✓ 2020 թվականի 1-ին եռամսյակում համարվել է արտոնագրային վճար վճարող.

▪ **հարկային մարմին դիմելու վերջնաժամկետը՝** մինչև 2020 թվականի օգոստոսի 1-ը:

▪ ***աջակցության ստացման եղանակը՝*** փոխանցվում է շահառուի բանկային հաշվին, իսկ բանկային հաշվի բացակայության դեպքում՝ շահառուի նշած առևտրային բանկ:

▪ ***ուշադրություն.***

✓ եթե նշվում է բանկային հաշվեհամարը, ապա այն պետք է պատկանի շահառու հանդիսացող հարկ վճարողին.

✓ դիմումներում չպետք է նշվեն արդեն իսկ փակված հաշվեհամարներ.

✓ պարտադիր ստուգել բանկային հաշվի նիշերի համապատասխանությունը: Անձը հաստատող փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը լրացնելիս ևս մեկ անգամ ստուգել դրանց ճշտությունը:

Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջում հրապարակվում են սույն միջոցառման շրջանակներում դրամական աջակցություն ստացած տնտեսավարողների տվյալները: